## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

վկայակոչելով 2000 թվականի հուլիսի 24-ին Վաշինգտոնում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, այսուհետ՝ «Հովանոցային համաձայնագիր», որի գործողության ժամկետը լրացել է 2023 թվականի նոյեմբերի 25-ին,

սույնով համաձայնեցին հետևյալի մասին.

1. Հովանոցային համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգել 7 (յոթ) տարի ժամկետով՝ մինչև 2030 թվականի նոյեմբերի 24-ը:
2. Սույն Համաձայնությունն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ իրենց ներպետական ընթացակարգերի ավարտը հաստատելու մասին դիվանագիտական ուղիներով Կողմերի վերջին գրավոր ծանուցման օրվանից:
3. Սույն Համաձայնությունը գործում է 2023 թվականի նոյեմբերի 25-ից:

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է Երևան քաղաքում, 2024թ. դեկտեմբեր 2-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ | ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ |
|---|---|
| [signature] | Kristina A. Kvien |

**AGREEMENT**

**TO EXTEND THE AGREEMENT BETWEEN THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE GOVERNMENT OF THE UNITED STATES OF AMERICA CONCERNING COOPERATION IN THE AREA OF COUNTERPROLIFERATION OF WEAPONS OF MASS DESTRUCTION**

The Government of the Republic of Armenia and the Government of the United States of America, hereinafter referred to as "the Parties",

Recalling the Agreement between the Government of the Republic of Armenia and the Government of the United States of America Concerning Cooperation in the Area of Counterproliferation of Weapons of Mass Destruction, signed at Washington on July 24, 2000, which expired on November 25, 2023 (the "Umbrella Agreement"),

Hereby agree as follows:

1. The Umbrella Agreement shall be extended for a period of 7 (seven) years, through November 24, 2030.
2. This Agreement shall enter into force on the date of the last written notification of the Parties, through diplomatic channels, confirming the completion of their internal procedures necessary for its entry into force.
3. This Agreement shall apply with effect from November 25, 2023.

SIGNED in Yerevan, on May 2 2024, in two originals, each in the Armenian and English languages, both texts being equally authentic.

**FOR THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA:**

**FOR THE GOVERNMENT OF THE UNITED STATES OF AMERICA:**

Kristina A. Kvien

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024թ. մայիսի 2-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» համաձայնության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարության**
**միջազգային պայմանագրերի և**
**իրավունքի վարչության պետի**
**պարտականությունները կատարող**

**Տիգրան Սարգսյան**